

ՀՀ ՎՃՌԱՔԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՏԵՐՈՇ ԵՒ ԴԵՐՈՇ ՀԱՆՐԱՅԻՆ- ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Կարեն Ամիրյան

*ԵՊՀ պետության և իրավունքի տեսության
ու պատմության ամբիոնի ասպիրանտ*

Հանրային-իրավական պատասխանատվության սկզբունքը հատուկ է նաև արդարադատություն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ բարձրագույն դատական ատյաններին: Վճռաքել դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակն էական փոփոխության ենթարկվեց 2015 թ. սահմանադրական փոփոխություններով: Ընդհանրապես, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, վերաքննիչ դատարանները, Վճռաքել դատարանը, ինչպես նաև մասնագիտացված դատարանները դատական իշխանության գործառական համակարգային ամբողջություն են: Այդ համակարգը կառուցված է գործառական աստիճանակարգման և արդարադատական գործառույթների ներհամակարգային տարանջատման սկզբունքներով՝ ներքևից վերև: ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Վճռաքել դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները¹: Այս սահմանադրական դրույթի օրենսդրական ամրագրումը կարգավորվում է ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասով, ըստ որի՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Վճռաքել դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ: Սա հենց պոզիտիվ պատասխանատվության ուղղակի դրսևորում է, երբ դատարաններն օրենսդրոտեն սահմանված հստակ պարտականություն ունեն՝ կիրառել և կայացվող դատական ակտի հիմքում դնել նաև Վճռաքել դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները): Այստեղ էականն այն է, որ դատարանները նույնանման

¹ Վճռաքել դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու գործառույթի կարևորությունն ընդգծել է նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը (տե՛ս *S.W. v. the United Kingdom*, 1995 թվականի նոյեմբերի 25-ի վճիռ, գանգատ թիվ 20166/92, 36-րդ կետը, *C.R. v. the United Kingdom*, 1995 թվականի նոյեմբերի 22-ի վճիռ, գանգատ թիվ 20190/92, 34-րդ կետը, *Beian v. Romania*, 2007 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռ, գանգատ թիվ 30658/05, 39-րդ կետը, *Baranowski v. Poland*, գանգատ թիվ 28358/95, 56-րդ կետը, ECHR 2000-III, *Sovtransavto Holding v. Ukraine*, գանգատ թիվ 48553/99, 97-րդ կետը, ECHR 2002-VII, *Padurar v. Romania*, գանգատ թիվ, 63252/00, 98-րդ կետը): Վճռաքել դատարանի տեղին և դերին, օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու հարցին անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը (տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-690 որոշումը):

փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ իրավունք ունեն շեղվելու Վճռաբեկ դատարանի դատական ակտի հիմնավորումներից, այն անհրաժեշտ պայմանով, որ ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորեն, որ դրանք կիրառելի չեն:

«Վճռաբեկ դատարանը հանրային-իրավական դրական պատասխանատվությունը ներառում է հետևյալ հանգամանքները՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելը, մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելը: Վերջինը իր հերթին իրացվում է, ի թիվս այլի, նաև հետևյալ կերպ.

ա) այն դատական ակտերը բեկանելով, որոնց հիմքում ընկած են օրենսդրությամբ սահմանված՝ դատական ակտն անվերապահ բեկանման ենթակա դեպքերը,

բ) նոր և նոր երևան եկած հանգամանքների դեպքում գործի նորոգման միջոցով:

Օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառույթը որպես կանոն ենթադրում է առաջնորդվել գերակշռորեն մեկնաբանության նախադեպով: Չնայած արդարացիորեն առաջանում է այն հարցադրումը, թե օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելիս արդյոք վճռաբեկ դատարանը պետք է սահմանափակվի լույս մեկնաբանողական նախադեպով, թե իրավասու է կայացնել նաև իրավաստեղծ նախադեպ:

Ինչևէ, բարձրագույն դատական ատյանների կողմից օրենքի միատեսակ մեկնաբանությունը և ըստ այդմ միասնական դատական պրակտիկայի ապահովումը տեսաբանները համարում են օբյեկտիվ անհրաժեշտություն՝ պայմանավորված այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ անընդհատ փոփոխվող օրենսդրությունը, որը հաճախ բարդ իրավական խնդիրներ է առաջացնում իրավակիրառ պրակտիկայում, իրավական համակարգի աստիճանական համապատասխանեցումը իրավունքի հանրաձանաչ սկզբունքներին և միջազգային իրավունքի նորմերին, սկզբունքորեն նոր կատեգորիայի գործերի ի հայտ գալը, որոնք ունեն հասարակական և պետական կարևոր նշանակություն¹:

Օրենսդրական բացի, օրենքի նորմի անհստակության կամ տարակերպ կիրառման դեպքում կարևորվում է մեկնաբանողական նախադեպի ինստիտուտը: Կարելի է համաձայնվել մեկնաբանողական նախադեպի առնչությամբ Պ.Վ. Գուկի հայտնած այն մտքի հետ, որ դա բարձրագույն դատական որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն են, որոնք միտված են օրենքի դրույթի իրական իմաստի, բովանդակության բացահայտմանը, ինչպես նաև օրենքի միատեսակ կիրառման ապահովմանը²: Ի տարբերություն դասական դատական նախադեպի՝ մեկնաբանողական նախադեպի դեպքում դատարանի կողմից նոր նորմեր չեն ստեղծվում, այլ տրվում են օրենսդրական նորմերի ճիշտ և միակերպ կիրառման պայմաններն ու շրջանակները:

¹ St' u **Скитович В.В., Седельник В.В.** Правосудие и правоохранительная деятельность в евразийском пространстве к вопросу об имплементации судебного прецедента в правовую систему Республики Беларусь. <http://www.eurasian-advocacy.ru/pravosudie-i-pravookhranitelnaya-deyatelnost-v-evrazijskom-prostranstve/1468-k-voprosu-ob-implementatsii-sudebnogo-pretседента-v-pravovuyu-sistemu-respubliki-belarus>, **Вишневский Г.А.**, Единство судебного правоприменения как способ обеспечения верховенства права. <http://ecsocman.hse.ru/data/2012/01/06/1270397099/2-2011-4.pdf>

² St' u **Гук П.А.**, Судебный прецедент как источник права, Диссертация на соис. канд. юрид. наук..., Саратов, 2002, էջ 47:

Այս առումով բավական հետաքրքիր է և կարելի է համառոտ ներկայացնել նաև Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներ, որոնք իրապես կենսական նշանակություն ունեցան իրավակիրառ պրակտիկան միասնական և իրավական ճանապարհով զարգացնելու առումով: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք վավերապայմաններ (ԵԿԴ/1221/02/08, 2009 թվականի ապրիլի 17-ի որոշում, ԵԱԲԴ/1272/02/08 2009 թվականի հուլիսի 24-ի որոշում, ԱԿԴ/1/0090/02/08, 2009 թվականի հուլիսի 24-ի որոշում): Քրեական գործերով նույնպես Վճռաբեկ դատարանը կայացրել է բազմաթիվ կարևոր որոշումներ, որոնք նախադեպային նշանակություն ունեն և իրավաչափորեն ուղղորդում են դատական պրակտիկան՝ նպաստելով կայուն և վստահելի արդարադատությանը: Այսպես, հատկանշական է խուլիգանության համար պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի վերաբերյալ որոշումը, որտեղ ՀՀ Վճռաբեկ դատարանը մեկնաբանել է վերոնշյալ քրեաիրավական դրույթը և ձևավորել իրավական դիրքորոշումներ՝ հաշվի առնելով օրենքի բուն իմաստը, ինչպես նաև միջազգային փորձը (Շ. Հախվերդյանի վերաբերյալ որոշում, ԱԿԴ/0014/01/11): Կարևոր նշանակություն ունեն նաև մրցակցության սկզբունքի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները (Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշման 13-րդ կետ):

Վճռաբեկ դատարանի կողմից իրականացվող մեկնաբանողական նախադեպի միջոցով հստակեցվել, պարզաբանվել և միասնական դատական պրակտիկա է ձևավորվել այնպիսի հասկացությունների, եզրույթների մեկնաբանման, իրավակիրառ պրակտիկայում դրանց ճիշտ ընկալման առումով, ինչպիսիք են, մասնավորապես, անհաղթահարելի ուժը (ԵԲԴ/0595/04/08 2009 թվականի ապրիլի 17-ի որոշում, ԵԿԴ/0883/02/08 2009 թվականի սեպտեմբերի 18-ի որոշում), ձեռնարկատիրական գործունեությունը (3-1161(ՏԴ) 2007 թվականի օգոստոսի 1-ի որոշում), հայացային վաղեմությունը (ԿԴ/0197/02/08 2009 թվականի մարտի 13-ի որոշում, ԵԲԴ/0075/02/08 2009 թ. մարտի 13-ի որոշում), օրինական ուժի մեջ մտած սկզբնական դատական ակտի նախադատելիությանը (3-28/ԿԴ/2007, 26.01.2007 թ., 3-93/ԿԴ/2008 թ.), ապացույցի և ապացուցման մասով (ԵԱՆԴ/0479/02/08, 13.02.2009 թ.-ի որոշում, ԵՄԴ/0232/02/08, 17.04.2009 թ.-ի որոշում, ԱԿԴ/0235/02/10, 29.07.2011 թ.-ի որոշում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 101-րդ կետում ամրագրված՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը (Ֆ. Ոսկանյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0022/11/12), առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմանները (Ս.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0030/01/12): Բացի այդ՝ կարևոր նշանակություն ունեցան նաև վճռաբեկ դատարանի այս որոշումները՝ Գագիկ Միքայելյանի գործով 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշումը (այս որոշմամբ ձերբակալված և կալանավորված անձի դատավարական կարգավիճակից զատ՝ նախատեսվեց նաև բերվածի դատավարական կարգավիճակը), Տ. Քամայանի գործով 2010 թ. մարտի 26-ի թիվ ԵՇԴ/0097/01/09 որոշումը, որով Վճռաբեկ դատարանը դատական քննության արագացված կարգ կիրառելու հարցը լուծելիս տուժողի դիրքորոշումն իմանալու պարտադիր իրավական պահանջ նախատեսվեց:

«Հ քաղաքացիական դատավարության, վարչական դատավարության և քրեական դատավարության օրենսգրքերի ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսդիրը սահմանել է օրենքի միատեսակ կիրառության ընկալման որոշակի, սակայն ոչ բավարար չափորոշիչներ¹: Այսպես, դատավարական օրենսդրության համապատասխան հողվածների համաձայն, բողոքը բերած անձը պետք է հիմնավորի, որ դրա վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կնպաստի օրենքի միատեսակ կիրառության ապահովմանը՝ մասնավորապես վճռաբեկ բողոքում հիմնավորելով, որ՝

1) տարբեր գործերով ստորադաս դատարանների առնվազն երկու դատական ակտում միևնույն նորմը կիրառվել է հակասական մեկնաբանությամբ՝ կցելով այդ դատական ակտերը և մեջբերելով դրանց հակասող մասերը, կատարելով համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով ստորադաս դատարանի դատական ակտում կիրառված միևնույն նորմի՝ իրար հակասող մեկնաբանության վերաբերյալ.

2) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասում բացահայտված՝ տվյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակությանը՝ կցելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումը և մեջբերելով ստորադաս դատարանի դատական ակտի այն մասը, որը հակասում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասին՝ կատարելով համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասի միջև առկա հակասության վերաբերյալ.

3) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը՝ կցելով այդ դատական ակտերը և մեջբերելով դրանց հակասող մասերը, կատարելով համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դատական ակտի հակասության վերաբերյալ.

4) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը՝ կցելով այդ դատական ակտերը և մեջբերելով դրանց հակասող մասերը, կատարելով համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ,

¹ Օրենքի միատեսակ կիրառության հարցին, դրա կենսականությանն անդրադարձել է նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը իր մի շարք որոշումներում, մասնավորապես, **S. W. v. the United Kingdom**, 1995 թվականի նոյեմբերի 25-ի վճիռ, 36-րդ կետ, **C. R. v. the United Kingdom**, 1995 թվականի նոյեմբերի 22-ի վճիռ, 34-րդ կետ, **Beian v. Romania**, 2007 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռ, 39-րդ կետ, **Baranowski v. Poland**, զանգատ թիվ 28358/95, 56-րդ կետ, ECHR 2000-III, **Sovtransavto Holding v. Ukraine**, զանգատ թիվ 48553/99, 97-րդ կետ, ECHR 2002-VII, **Paduraru v. Romania**, 98-րդ կետ:

5) բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Վերոնշյալ կարգավորման 2-րդ կետում ամրագրված այն ձևակերպումը, ըստ որի՝ «բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասում բացահայտված՝ տվյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակությանը...», սահմանադրականության տեսանկյունից բավականին խնդրահարույց է, քանի որ Սահմանադրական դատարանի որոշումները պետք է դիտարկել իրենց ամբողջականության մեջ: Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները կազմում են որոշման անբախտելի բաղադրատարրը, որոնք իրենց խտացված և իմաստավորված ամփոփումն են գտնում որոշման արդեն եզրափակիչ մասում: Ուստի, պետք է արձանագրել, որ սահմանադրական դատարանը նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտում է պատճառաբանական մասում, և որոշման բոլոր մասերը սերտորեն կապակցված են միմյանց հետ, մեկ միասնական տրամաբանական ամբողջություն են ներկայացնում: Հետևաբար, գտնում ենք, որ օրենսդրության մեջ առկա ձևակերպումը խնդրահարույց է Սահմանադրության տեսանկյունից և վերանայման անհրաժեշտություն ունի:

Իրավունքի զարգացման խնդիրն իրականում առանձին հետաքրքրություն է ներկայացնում: Այս հարցի շուրջ իր դիրքորոշումն ունի նաև Վճռաբեկ դատարանը, որտեղ մասնավորապես նշվում է. «Իրավունքի զարգացմանը նպաստելու գործառույթը ենթադրում է ոչ միայն Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության հարցում միասնական դիրքորոշման ձևավորում՝ մասնավորապես, իրավական նորմի մեկնաբանության արդյունքում, այլև ձևավորված դիրքորոշման հետագա զարգացում, որն իրավաչափորեն կարող է հանգեցնել Վճռաբեկ դատարանի կողմից արդեն իսկ մեկնաբանված նորմի նոր մեկնաբանման: Նման իրավիճակներում կարևորվում է Վճռաբեկ դատարանի որոշման՝ որպես իրավական ակտի, ժամանակի ընթացքում գործողության, ինչպես նաև նախորդ որոշումներում արտահայտած դիրքորոշումների կիրառելիության հարցերի հստակեցումը: Իրավունքի զարգացմանը նպաստելու գործառույթի նպատակից և բովանդակությունից տրամաբանորեն բխում է, որ իրավունքի զարգացման արդյունքում ձևավորված նոր դիրքորոշումը պետք է գերակայի նախորդ դիրքորոշման նկատմամբ և հիմք ընդունվի Վճռաբեկ դատարանի նոր դիրքորոշումը՝ ձևավորած որոշման կայացման պահին դատարանների վարույթներում գտնվող գործերի լուծման համար: Այլապես կիմաստագրկվի իրավունքի զարգացմանը նպաստելու գործառույթը» (թիվ ՎԴ/1346/05/10 վարչական գործով Վճռաբեկ դատարանի որոշում):

Սակայն, օրենսդրական մակարդակում տրված չէ ժամկետային սահմանափակման հարցատրման պատասխանը: Այսինքն, թե ինչքան ժամանակ անց կարող է վճռաբեկ դատարանը փոփոխել իր նախկին իրավական դիրքորոշումը, արդյոք այդ դեպքում Վճռաբեկ դատարանը պետք է հստակ պատճառաբանի, հիմնավորի դրա անհրաժեշտությունը:

Օրինակ, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (հոդված 68, մաս 14) թույլ է տալիս սահմանադրական դատարանին վերանայել իր որոշումը, այդ թվում՝ դիրքորոշումը միայն, եթե նախորդ որոշումից հետո անցել է առնվազն 7 տարի, և եթե առկա է հետևյալ պայմաններից մեկը.

1) փոփոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթը.

2) ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել սահմանադրական դատարանի այլ որոշում, և եթե տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն:

Գտնում ենք, որ հարցի լուծումը կարելի է գտնել հենց այս ձևակերպումների մեջ՝ հարմարեցնելով դրանք Վճռաբեկ դատարանի գործառույթին: Սակայն, անկախ ժամկետային սահմանափակում և հիմքեր նախատեսելուց, անհարժեշտ է, որ կայացվելիք դատական ակտը լինի հստակ փաստարկված, որպեսզի օբյեկտիվ դիտորդի մոտ առերևույթ համոզում չառաջանա հակառակի մեջ:

«Քաղաքացիական դատավարության, վարչական դատավարության և քրեական դատավարության օրենսգրքերի ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսդիրը սահմանել է դատական ակտը անվերապահ բեկանման հիմքեր¹, որոնց պարագայում դատարանը հստակ պարտականություն է կրում բեկանելու այդպիսի դատական ակտերը²:

Ինչ վերաբերում է նոր երևան եկած և նոր հանգամանքներին, ապա դրանց հստակ և սպառիչ դեպքերը սահմանված են դատավարական օրենսդրություններով: «Սահմանադրական դատարանն իր բազմաթիվ որոշումներում անդրադարձել է նոր երևան եկած և նոր հանգամանքներին, օրենսդրորեն սահմանված կանոնակարգումների սահմանադրականությանը՝ հստակ սահմանելով նաև Վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական պատասխանատվության շրջանակը³:

Ինչպես նշվեց, «Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը. վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները: Սահմանադրական մակարդակում մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու սահմանադրական գործառույթ նախատեսելն իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորման հարցում կարևոր առաջընթաց է:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում արձանագրել երկու կարևոր հանգամանք: Նախ, նոր Սահմանադրությամբ վճռաբեկ դատարանի կողմից իրավական ակտերի միասնական կիրառություն ապահովելու գործառույթի սահմանադրական ծավալն ընդլայնվեց, և Վճռաբեկ դատարանն արդեն կոչված է ապահովելու ոչ միայն օրենքների, այլև այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:

Երկրորդ, սահմանադրական բարեփոխումներով Վճռաբեկ դատարանի հիմնական գործառույթին՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելուն, ավելացավ մեկ այլ՝ ոչ պակաս կենսական, հիմ-

¹ Վճռաբեկ դատարանը նույնպես նշել է, որ օրենսդիրն անվերապահ բեկանման հիմքերը նախատեսող հոդվածում առանձնացրել է այնպիսի դատական սխալներ, որոնք անմիջակաՆորեն կապված են արդարադատության սզբունքների և դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի խախտումների հետ («Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/1118/02/12 քաղաքացիական գործերով 2014 թվականի նոյեմբերի 28-ի որոշում):

² «Վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդված, «Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդված, «Քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդված:

³ Տե՛ս, մասնավորապես, ՍԴՈ-984 ՍԴՈ-1010, ՍԴՈ-1038, ՍԴՈ-1063, ՍԴՈ-1115, ՍԴՈ-1120, ՍԴՈ-1234, ՍԴՈ-1254, ՍԴՈ-1290, ՍԴՈ-1293, ՍԴՈ-1294, ՍԴՈ-1310, ՍԴՈ-1315, ՍԴՈ-1321, ՍԴՈ-1322, ՍԴՈ-1325, ՍԴՈ-1334, ՍԴՈ-1340, ՍԴՈ-1049 որոշումները:

նական գործառույթ՝ վերացնել մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները: Այն, որ Վճռաբեկ դատարանը կոչված է վերացնելու նաև մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները, փաստում են նաև տեսաբանները՝ մասնավորապես նշելով, որ «Վճռաբեկ դատարանի կողմից իրականացվող դատական վերանայման գործառույթն աներկբայորեն պետք է ուղղված լինի վերջինիս սահմանադրաիրավական այն խնդիրների իրացմանը, որոնք գտնվում են փոխադարձ սերտ կապի մեջ, քանի որ առանց մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները (սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության վերջնական նպատակը խաթարող նյութական և դատավարական իրավունքի նորմերի կոպիտ խախտումները) վերացնելու անհնար է ապահովել օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը և դատական պրակտիկայի միասնականությունը¹»: Վճռաբեկ դատարանը նախ և առաջ կոչված է իր գործունեությունը ծառայեցնելու դատական սխալների ուղղման խնդրի հետևողական իրացմանը՝ ստեղծելով երաշխիքներ անձի իրավունքների և օրինական շահերի գործուն պաշտպանության համար²: Օրենքի միատեսակ կիրառության ապահովելու գործառույթը Վճռաբեկ դատարանի գործունեության նպատակն է, սակայն ոչ բոլոր գործերով է Վճռաբեկ դատարանը ապահովում օրենքի միատեսակ կիրառություն³:

Սահմանադրաիրավական նոր մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Վճռաբեկ դատարանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, նախ և առաջ կոչված է իրականացնել արդարադատություն: Իսկ սոսկ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու հիմնական գործառույթ ունենալու դեպքում հնարավոր էր՝ որոշակի վտանգ առաջանար արդարադատության հիմնարար գործառույթից բխող՝ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ իրականացման առումով: Չէ՞ որ արդարադատությունը՝ որպես դատարանների հիմնարար գործառույթ, Վճռաբեկ դատարանի պարագայում պետք է իրացվի հիմնական գործառույթների միջոցով՝ ապահովել օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը և վերացնել մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

Վճռաբեկ դատարանի հանրային-իրավական պատասխանավությունը լիարժեք և որոշակի լինելու համար անհրաժեշտ է, որ

- օրենսդրորեն հնարավորինս հստակեցվեն «օրենքի միատեսակ կիրառություն» և «հիմնարար խախտում» հասկացությունները, և բացառվի հայեցողական մոտեցումը,

¹ Տե՛ս Վ. Հովհաննիսյան, Մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները Վճռաբեկ դատարանի կողմից վերացնելու սահմանադրաիրավական խնդրի իրացումը քաղաքացիական դատավարությունում, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2016, № 2 (20), էջ 66, http://ysu.am/files/06V_Hovhannisyanyan.pdf:

² Տե՛ս Տ. Սուջյան, Վճռաբեկության սահմանները հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության համատեքստում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2013թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան, 2014, էջ 249:

³ Տե՛ս Ա. Անտոնյան, Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովմանն ուղղված քաղաքացիադատավարական ներգործության միջոցների կիրառման հիմնախնդիրները, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան, 2016, էջ 363:

- ապահովվեն Վճռաբեկ դատարանի կողմից տրված մեկնաբանությունների որջամիտ կայունությունը և կայուն զարգացումը,

- օրենսդրորեն ամրագրվեն Վճռաբեկ դատարանի կողմից իրավունքի զարգացման հիման վրա ձևավորված նոր իրավական դիրքորոշման պատճառաբանման անհրաժեշտությունը, ինչպես նաև այն հարցադրման պատասխանը, թե ինչքան ժամանակ անց կարող է Վճռաբեկ դատարանը փոփոխել իր նախկին իրավական դիրքորոշումը:

Հետևաբար, կարող ենք եզրահանգել, որ Վճռաբեկ դատարանի՝ որպես հանրային-իրավական պատասխանատվություն կրող մարմնի տեղը և դերը՝ հանրային-իրավական պատասխանատվության սկզբունքի իրացման համատեքստում դրսևորվում են հետևյալ առումներով.

- օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակով ընդունել նախադեպային նշանակություն ունեցող որոշումներ, որոնցում արտահայտված իրավական դիրքորոշումներին հետևելու, իրացնելու համար դատարանները, այդ թվում նաև Վճռաբեկ դատարանը դրական պատասխանատվություն են կրում,

- վերացնել մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները, որոնք հանդես են գալիս որպես բացասական պատասխանատվություն այդ խախտումները թույլ տված սուբյեկտների նկատմամբ:

Վճռաբեկ դատարանի կողմից միայն երկու հիմնական գործառույթների՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու, մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու, ինչպես նաև դրանց միջոցով իրականացվող դրական և բացասական պատասխանատվության համաչափ հավասարակշռման պարագայում է հնարավոր նվաճել բուն նպատակը՝ արդարադատության իրականացումը:

РОЛЬ И МЕСТО КАССАЦИОННОГО СУДА РА В ПРОЦЕССЕ РЕАЛИЗАЦИИ ПРИНЦИПА ПУБЛИЧНО-ПРАВОВОЙ ОТВЕТСТВЕННОСТИ

Карен Амирян

Аспирант кафедры теории и истории государства и права ЕГУ

В рамках статьи предметом рассмотрения стала роль Кассационного Суда Республики Армения в контексте осуществления принципа публично-правовой ответственности.

В статье делается вывод о том, что в целях обеспечить полноту и определенность публично-правовой ответственности Кассационного Суда необходимо следующее:

- на законодательном уровне уточнить термины «единообразное применение закона» и «фундаментальное нарушение» и исключить дискреционные подходы,

- обеспечить разумную стабильность и устойчивое развитие комментариев Кассационного суда,
- на законодательном уровне закрепить необходимость обоснования новых правовых позиций, образованных на основе развития права со стороны Кассационного суда, а также и ответ на тот вопрос, что через какое время Кассационный суд может изменить свою прежнюю правовую позицию.

THE PLACE AND THE ROLE OF THE COURT OF CASSATION IN THE PROCESS OF EXERCISE OF THE PRINCIPLE OF PUBLIC-LEGAL RESPONSIBILITY

Karen Amiryan

PHD Student at YSU Chair of Theory and History of State and Law

Within the framework of the present article the subject of discussion has become the role and the place of the RA Court of Cassation in the context of exercise of the principle of public-legal responsibility.

In this article, we have concluded that for the public-legal responsibility of the Court of Cassation to be complete and certain, it is necessary to:

- legally clarify the "uniform application of law" and "fundamental violation" definitions and exclude discretionary approaches,
- ensure a reasonable stability and sustainable development of the interpretations of the Court of Cassation,
- establish by law the necessity of reasoning the new legal position of the Court of Cassation based on the development of law, and the answer to the question after how much time the Court of Cassation may change its previous legal position.

Բանալի բառեր – *իրավական պատասխանատվություն, հանրային-իրավական պատասխանատվություն, պետական իշխանության պատասխանատվություն, պոզիտիվ պատասխանատվություն, Վճարելի դատարան, օրենքի միատեսակ կիրառություն:*

Ключевые слова: *правовая ответственность, публично-правовая ответственность, ответственность государственной власти, позитивная ответственность, Кассационный Суд, единообразное применение закона.*

Key words: *responsibility, legal responsibility, legal liability, public-legal liability, public-legal responsibility, state authority responsibility, state authority liability, positive responsibility, Court of Cassation, uniform application of the law.*